ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«03» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000116

Ձեռնարկողը՝ ***«Կարոշիննախագիծ» ՍՊԸ***
ք. Երևան, Վաղարշյան փող. 24/1, բն. 43

Գործունեությունը՝ ***Թիվ 109 ավագ դպրոցի կառուցման նախագծային աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000116

<03> 12 2020թ.

Երևան քաղաքի թիվ 109 ավագ դպրոցի կառուցման նախագծային աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Կարոշիննախագիծ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝ ք Երևան, Աջափնյակ վարչական շրջան

Նախագծվող թիվ 109 ավագ դպրոցը նախատեսվում է կառուցել Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան փողոց 2-րդ նրբանցք 14 շենքի հասցեում գործող համանուն՝ թիվ 109 ավագ դպրոցի տարածքում: Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի գոյություն ունեցող շենքը, որը կառուցվել է 1970-ական թվականներին նախատեսվում է ապամոնտաժել: Երևան քաղաքում նախագծվող թիվ 109 ավագ դպրոցի կառույցի (ներառյալ՝ օժանդակ կառույցները՝ կաթսայատուն և էլ. ենթակայանը) կառուցապատման մակերեսը կազմում է 2759.91մ²

Նախատեսվող գործնեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Երևանի թիվ 109 դպրոցի հողատարածքի ընդհանուր մակերեսն ըստ նախագծի կազմում է 0.80132հա: Ներկայացվող գործունեության ընթացքում դպրոցի շենքի կառուցապատման, տարածքի և կանաչապատ գոտիների բարեկարգման աշխատանքների շրջանակը կընդգրկի շուրջ 7994.11մ² տարածք, մասնավորապես՝ դպրոցի մասնաշենքերի և օժանդակ կառույցների կառուցապատման մակերեսը կկազմի 2759.91մ², կբարեկարգվի և կկանաչապատվի 5234.22մ² մակերեսով տարածք: Դպրոցը նախատեսվում է կառուցել 350 աշակերտի համար:

109 ավագ դպրոցի համալիրը կառուցվելու է թվով երեք մասնաշենքերից՝ առաջինը հիմնական ուսումնական մասնաշենք, երկրորդը գլխավոր մուտքի և սպասարկման

մասնաշենք, երրորդը հանդիսությունների և մարզադահլիճի մասնաշենք: Մասնաշենքերը միմյանց միացված են հակասեյսմիկ կարերով:

Դպրոցի հիմնական ուսումնական մասնաշենքը հատակագծում ներկայացված է 15.50x60.0մ առանցքային չափերով, եռահարկ է՝ 3մ յուրաքանչյուր հարկի բարձությամբ, ունի նկուղային հարկ՝ 2.4մ բարձությամբ: Մասնաշենքի առաջին և երկրորդ հարկերում նախատեսված է դպրոցի ուսումնական և անհատական պարապունքների սենյակները, տնօրենի աշխատասենյակը՝ կից ընդունարանով, ուսուցչանոցը և փոխտնօրենի աշխատասենյակը, երրորդ հարկում՝ ռազմագիտության սենյակը և զինանոցը: Մասնաշենքի հատակագծային լուծումներում հաշվի են առնված նաև ռեկրեացիոն գոտիները, միջանցքները, աստիճանավանդակները՝ դեպի դուրս ելքերով, սանհանգույցները՝ աշակերտների և ուսուցիչների համար: Հաշմանդամություն ունեցող երեխաների և այլ սակավաշարժ խմբերի համար նախատեսվում են վերելակ և թեքահարթակներ՝ արտաքին մուտքերում, ինչպես նաև հաշմանդամ երեխաների համար հարմարեցված սանհանգույցներ:

Դպրոցի գլխավոր մուտքի և սպասարկման մասնաշենքը հատակագծում ներկայացված է 18.0x21.7մ առանցքային չափերով, կից է հիմնական ուսումնական, հանդիսությունների և մարզադահլիճի մասնաշենքերին, երկհարկանի է՝ յուրաքանչյուր հարկի բարձրությունը 3մ, ունի նկուղային հարկ՝ 2.4մ բարձությամբ: Մասնաշենքի առաջին հարկում նախատեսված է դպրոցի ճաշարանը՝ կից խոհանոցով և պահեստներով: Մասնաշենքի երկրորդ հարկում նախատեսվում է թանգարանը և գրադարանը՝ իր գրապահոցով:

Դպրոցի բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձին մուտքեր: Մուտքերի տեղադիրքերի ընտրությունն իրականացված է այնպես, որ դպրոցի համալիրն ամեն ուղղությամբ կունենա էվակուացիոն ելքեր:

Միջանցքներում, աստիճանավանդակներում և հարթակներում կիրականացվեն արհեստական գրանիտե հատակներ, սանհանգույցներում՝ խեցեսալե, իսկ դահլիճներում՝ վինիլային և կավրոլիտե հատակներ, մնացած սենյակներում՝ լամինատե հատակներին նմանվող վինիլային հատկներ:

Արտաքին բոլոր պատերը կջերմամեկուսացվեն հանքային բամբակով, որի վրա կիրանկացվի մետաղական ցանց, որն էլ կսվաղվի ցեմենտ/ավազային շաղախով: Սվաղը կծածկվի ճակատային քսամածուկով և կներկվի ճակատային բարձրորակ ներկերով: Արտաքին պատերի մնացած լուծումներում կիրականացվի երեսպատում՝ ֆիբրոցեմենտային և տուֆե սալիկներով:

Դպրոցի արտաքին դռները նախատեսվում են ալյումինե ջերմամեկուսիչ կամրջակով և ապակեփաթեթով, իսկ ներքին դռները՝ մետաղապլաստե և մետաղե: Նախատեսվում է մետաղեպլաստե պատուհաններ և պլաստիկից պատուհանագոգեր: Դպրոցում կտեղադրվեն ապակեպատ մետաղեպլաստե և ալյումինե վիտրաժներ: Ներքին պատերի հարդարումը նախատեսվում է բարձրորակ գաջե սվաղից, որի վրա կիրականցվի լատեքսային ներկվածք: Սանհանգույցներում նախատեսվում է հախճասալերով երեսպատում՝ ցեմենտավազային շաղախի վրա և կիրականացվեն կախովի առաստաղներ:

Կոնստրուկտիվ լուծումների տեսանկյունից, բոլոր մասնաշենքերը նախագծվում են միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ դպրոցի հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ:

ՓՈՐՁԱՐԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Դպրոցին կից նախատեսվում է կառուցել 22.85մ² մակերեսով կաթսայատուն, ինչպես նաև գոյություն ունեցող էլեկտրական ենթակայանը, որը գտնվում է նոր մասնաշենքերի մուտքային հատվածում, ապամոնտաժվելու է, և կառուցվելու է նոր 21.00մ² մակերեսով ենթակայան, համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված N05-ԴԳ-02/281 տեխնիկական գրության, միաժամանակ ավելացնելով 60ԿՎԱ հզորություն (ընդհանուր 130 ԿՎԱ),

109 դպրոցի նախագծում հաշվի են առնված նաև ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժենարական լուծումները՝ ըստ տրամադրված տեխնիկական պայմանների

Տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է իրականացնել դպրոցի տարածքի ազատ և երթևեկելի գոտիների, մայթերի, ինչպես նաև բացօթյա թեթև ատլետիկայի հրապարակի (840.90մ²), ինչպես նաև ասֆալտե ծածկույթի իրականացում 2469.32մ²: Դպրոցի մուտքի հատվածում նախատեսվում է բետոնե սալիներով սալարկման աշխատանքներ՝ շուրջ 195.0մ²: Դպրոցի բացօթյա մարզահրապարակի ծածկույթը (1066.8մ²) նախատեսվում է իրականացնել նաև արհեստական կանաչապատում:

Տարածքի կանաչապատման աշխատանքների շրջանակում դպրոցի տարածքը կհամալրվի թվով 69 արժեքավոր ծառատեսակներով, մասնավորապես՝ նախատեսվում է տնկել սոճիներ (8 հատ), եղևնիներ (7 հատ), գնդաձև ակացիաներ (7 հատ), հուդայածառեր (26 հատ), սապոնածառ (8 հատ), կատալպա (7 հատ) և ձիակասկ (8 հատ): Ծառատեսակների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով նշված տեսակների Երևան քաղաքի բնակլիմայական պայմաններին հարմարվելու գործոնը և Երևանի քաղաքապետարանի կողմից արված առաջարկությունները: Աշխատանքները կընդգրկեն նաև 1496մ² մակերեսով սիզամարգերի իրականացում և 50մ² թփապատման աշխատանքներ սամշիտով՝ կանաչապատ գոտիների եզրային հատվածներում: Ընդհանուր առմամբ կանաչապատ գոտու հատակագծային մակերեսը կկազմի 1503.10մ²:

Կանաչապատ գոտիների ոռոգումը կիրականացվի պոլիպրոպիլենե DN50 (63x5.8), DN32 (40x3,0) խողովակներից, ոռոգման ծորակների և ռետինե խողովակների միջոցով:

Տարածքի հակահրդեհային անվտանգությունն ապահովելու համար նախատեսված է հակահրդեհային երկու հիդրանտներ (5.0 լ/վրկ):

Տաք ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել տանիքում տեղադրվող արևային ջրատաքացուցիչների (30 կոլբայով 2 կոլեկտոր) միջոցով, որտեղ որպես ջերմատար կօգտագործվի գլիուկոն:

Նախագծով դպրոցի ջեռուցումը կիրականացվի նորակառույց կաթսայատան՝«ECOMAX» ֆիրմայի 421 կվտ/ժամ հզորության ջրային երկու կաթսաների միջոցով, բնական գազի այրմամբ: Կաթսայատան հարևանությամբ նախատեսում է պահուստային հեղուկ վառելիքի ռեզերվուար՝ 10մ³ տարողությամբ:

Գոյություն ունեցող դպրոցի ապամոնտաժման աշխատանքները նախատեսվում է իրականացնել մասնաշենքերի (թվով 3) հաջորդաբար ապամոնտաժմամբ: Ապամոնտաժման գործողությունների ընդհանուր տևողությունը հաշվարկվում է 8.5 ամիս, ներառյալ նախաշինարարական աշխատանքները:

Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը, որպես երկրորդային շինարարական նյութեր, կտեղափոխվեն շինարարական կապալառուի պահեստ և կօգտագործվեն այլ շինարարական աշխատանքներում, իսկ

գոյացած շինարարական աղբը, որի ծավալը գնահատվում է մոտ 207.70մ^3, կտեղափոխվի և կթափոնակույտվի Երևանի քաղաքապետարանի որոշմամբ նախատեսված Սպանդարյան արդյունաբերական հանգույցի տարածքում գտնվող քաղաքային աղբավայր:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարումը կիրականացվի լիցենզավորված կազմակերպություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից:

Շինարարական հրապարակում բացառել բետոնաշաղախային խառնուրդի պատրաստման գործընթացը: Համապատասխան մակնիշի բետոնախառնուրդի առաքումը դեպի հրապարակ կիրականացվի բետոնախառնիչիներով Երևան քաղաքին մոտ գտնվող բետոնաշաղախային հանգույցներից:

Շինարարության նորմատիվ ժամկետն հաշվարկվել է 30.5 ամիս կամ 2.5 տարի:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առընչվում Աջափնյակ վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների և պահպանության ենթակա տարածքների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ ջրցանի իրականացում,
- ջրցանի ծավալների հաշվարկվումն այնպես, որ բացառվեն մակերևութային հոսքերը և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական մեքենաների տեղաշարժը կիրականացվի սահմանափակ՝ 30 կմ/ժ չգերազանցող արագությամբ, իսկ բեռնատարերի դեպքում՝ թափքի ծածկի առկայությամբ,
- աղմուկ առաջացնող աշխատանքները կիրականացվեն օրվա ցերեկային ժամերին և դպրոցի դասերի ավարտից հետո,
- կիրականացվի ծառատունկ, թփապատում և սիզամարգերի ստեղծման աշխատանքներ,
- շինարարական նյութերի ձեռք բերումը կիրականացվի լիցենզավորված մատակարարներից, ներառյալ՝ բետոնաշաղախը՝ Երևան քաղաքին մոտակա հանգույցներից,
- արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների ընթացակարգերը և կոնտակտային տվյալները պաստառների ձևով կտեղադրվեն հրապարակի տեսանելի վայրերում,
- կիրկանացվեն շինարարական հրապարակում աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումներ, ներառյալ՝ բանվորական կազմը կապահովվի սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտներով և այլ պաշտպանիչ միջոցներով,
- մեքենաների վառելիքի լիցքավորումը, քսայուղերի փոխարինումը կկազմակերպվի շինհրապարակից դուրս գտնվող մասնագիտացված կենտրոններում,
- տարածքի վերականգնում՝ հետշինարարական բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ ըստ մշակված և համաձայնեցված նախագծի,

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես որոշված լինելը՝ շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,
- շինարարական աղբի պատշաճ կերպով հավաքում և հեռացում՝ արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի տարածքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և Աջափնյակ վարչական շրջանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված՝ «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ30-01-2014 շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝

համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Կարոշիննախագիծ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի թիվ 109 ավագ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան